ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «22» 06 2016թ. №613-Ա

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N874-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 15.1-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի N372-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 874-Ն հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) «Մաս 1. Դասակարգիչ» մասի՝

   1) «B(ԲԻ) Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» բաժնի «08. Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» հատվածի «08.9 Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր, չներառված ուրիշ խմբավորումներում» խմբի «08.99 Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր, չներառված ուրիշ խմբավորումներում» դասի «08.93.4 Պեմզայի և բնական հղկանյութերի արդյունահանում» ենթադասում «08.93.4» թվերը փոխարինել «08.99.4» թվերով:

2) «Մ(ԷՄ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնի «71. Ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն. Տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ» հատվածի «71.1 Ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն. Տեխնիկական խորհրդատվություններ այդ բնագավառներում» խմբի «71.12 Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ» դասի «74.12.4 Կապի, հեռահաղորդակցական և անվտանգության համակարգերի նախագծում, նախագծերի փորձաքննություն» ենթադասում «74.12.4» թվերը փոխարինել «71.12.4» թվերով և «74.12.9 Ճարտարագիտական այլ գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ» ենթադասում «74.12.9» թվերը փոխարինել «71.12.9» թվերով:

3) «Բ(ՓԻ) Կրթություն» բաժնի «85. Կրթություն» հատվածի «85.5 Այլ կրթություն» խմբի «85.59 Այլ կրթություն չներառված ուրիշ խմբավորումներում» դասի «85.95.5 Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ» ենթադասում «85.95.5» թվերը փոխարինել «85.59.5» թվերով:

2. Հավելվածի «Մաս 2 Պարզաբանումներ» մասի՝ «Շ(ՍԻ) Մշակող արդյունաբերություն» բաժնի «26. Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն» հատվածի «26.8 Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն» խմբի «28.80 Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն» դասում «28.80» թվերը փոխարինել «26.80» թվերով:

3. Հավելվածի «Մաս 3. Այբբենական առարկայացանկ» մասում՝

1) «85.95.5» թվերը փոխարինել «85.59.5» թվերով,
2) «08.93.4» թվերը փոխարինել «08.99.4» թվերով

4. Հավելվածի «Մաս 4. Անցումային աղյուսակ» մասում՝

1) «85.95.5» թվերը փոխարինել «85.59.5» թվերով,
2) «08.93.4» թվերը փոխարինել «08.99.4» թվերով,

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ